ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ ИСТОРИЧЕСКИЙ МУЗЕЙ АН АРМ. ССР

Աշխատություններ № 2, 1949 Труды

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՍԼԱՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

# ՍԻՍԻԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՍԱՌՆԱԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ ՄՈՏ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԳԱՆՁԸ

Պետական Պատմական Թանգարանի դրամագիտական բաժինը 1946 թ. հուլիս և սեպտեմբեր ամիսներին, ինչպես և հետագայում, Սիսիանի շրջանից ստացավ արծաթե հին դրամների մի գանձ, որն իր հնությամբ և բազմատեսակությամբ կարևոր մի ժողովածու է։ Այդ գանձը, տեղացիների վկայությամբ, հայտնաբերվել է դեռևս 1945 թ. գարնանը նույն գյուղի մի քանի կոլտնտեսականների միջոցով, որոնք իրենց հանդում քաղհան անելու ժամանակ հողի մեջ նկատում են հեղեղի ջրերից բացված կճուճի մի մասը։ Նրանք կոտրելով հանում են կճուճը, որի միջից թափվում են բավական մաքուր մնացած արծաթե դրամներ։

1946 թ. հուլիս ամսին, երբ Պատմական Հուշարձանների Պահպանության Կոմիտեի էքսպեդիցիան գնում է դեպի Սիսիան և Զանգեզուր, Սիսիանում տեղեկություն է ստանում, որ Սառնակունք գյուղի մոտ գանձ է գտնվել. էքսպեդիցիայի անդամ ընկ. Գ. Սարգսյանը հետաքրքրվելով այդ խնդրով, անցնում է Սառնակունք և տեղական իշխանության ցույց տված աջակցության շնորհիվ, կարողանում է նույն գյուղի բնակիչներից ստանալ այդ գանձից 37 դրամ, որը և նա ներկայացրեց Պատմական Թանգարան։

Պատմական Թանգարանի դիրեկցիան աչքի առաջ ունենալով գտնված գանձի գիտական կարևորությունը՝ պատմական գիտությունների թեկնածու ընկ. Ա. Միրզոյանին գործուղում է Սիսիանի շրջանը, որպեսզի նա ձեռք բերի այդ գանձի մնացորդը։ Ընկ. Ա. Միրզոյանին հաջողվում է Սառնակունքի գանձից ձեռք բերել ևս 75 արծաթե դրամ։

Դրանից հետո, այդ դրամների մնացորդը ձեռք բերելու և գանձի հայտնաբերված վայրն ուսումնասիրելու համար, թանգարանից հատուկ արշավախումբ մեկնեց Սիսիան, որը տեղում պարզեց, որ գանձը գտնվել էր Սառնակունք գյուղից դեպի արևելք մոտ երկու կիլոմետր հեռավորության վրա, երկու միմյանց մոտ փոքր բլրակների միջև՝ հեղեղատի բացած հունի ձախ եզրին, գետնի երեսից ոչ այնքան խորը, թաղված է եղել կճուճը. ոչ ծառ, ոչ ժայռ և ոչ էլ աչքի ընկնող արտաքին որևէ նշան կար այդ վայրը բնորոշող. բազմաթիվ անգամ փորփրված հողի միջից արշավախմբի անդամները կարողացան գանձն ամփոփող կճուճի մի քանի բեկորները գտնել: Հանձնաժողովին հաջողվեց այդ նույն գանձից ձեռք բերել նաև 60 հատ արծաթյա թեթրադրախմա, դրախմա և դենար:

Ներկայումս Պետական Պատմական թանգարանը Սառնակունքի գանձից ունի 178 հատ արծաթյա դրամներ:

Այդ թանգարժեք գանձը բաղկացած է այնպիսի դրամների ժողովածուից, որոնք թեև վերաբերում են զանազան երկրների այլևայլ իշխողների, սակայն այդ գանձի դրամները (քիչ բացառությամբ) կտրելու ժամանակի տեսակետից բավական մոտ են միմյանց, տարբերությունը հազիվ 100—120 տարի է և վերաբերում են մեր թվականությունից առաջ երկրորդ դարի երկրորդ կեսից մինչև առաջին դարի 30-ական թվականներին, դրամների մեծ մասը վերաբերում են մ.թ.ա. առաջին դարին. միայն մի քանի թագավորների և երկրների դրամներն են, որոնք ավելի առաջ են կտրված:

Հետաքրքիր է այդ գանձի դրամների բաժանումն ըստ երկրների և ըստ նրանց կտրողների:

Գանձի 178 դրամները պատկանում են ութ երկրների, քանակով առաջին տեղն են բռնում հռոմեական ռեսպուբլիկական շրջանի դրամները, թվով . . . . . 105 հատ

Սելևկյան դրամները . . . . . 30 »
Փյունիկիայի քաղաքներինը . . 24 »
Իրանի պարթևական թագավորներինը 8 »
Փ. Ասիայի (Փռյուգիայի) դրամները 4 »
Հայկական Արտաշեսյան հարստության 3 »
Կապադովկիայի դրամներ . . . . 3 »
Պոնտական » . . . . 1 »

Առանձին վերցրած ամեն մի երկրի իշխողների անունով

դրամներն էլ տարբեր քանակ են ներկայացնում. այսպես, հռոմեական 105 դրամներից Մարկոս Անտոնիոսի անունով այդ գանձի մեջ կա 18 դրամ, որոնցից երկուսը վերաբերում են նրա ձեռքով Հայաստանը նվաճելուն։

Հուլիոս Կեսարի անունով . . . 8 դրամ

Վիբի Պանսայի » . . . 6 »

Տ. Կարիզիի » . . . 6 »

Մարցիուս Պլետորիուսի անունով . 4 »

Հոստիլի Սասեռնայի » . . 4 »

Պուբլիոս Կլոդիուսի » . . 4 »

Օկտավիանոսի » . . 3 »

Հոսիդի Գեթայի » . . 3 »

Կոնսիդի Պետի » . . 3 »

Կալպուրնիա Պիզոյի » . . 2 »

Ալբինի Բրուտուսի » . . 2 »

Պլավդիոս Պլանկուսի » . . 2 »

Մանի Ացիլիի . . . » . . 2 »

Մեկական դրամ ունեն . . . . 38 հոգի։

Սելևկյան թագավորների 30 դրամները վերաբերում են՝

Փիլիպպոս Էպիֆանին . . . . 17 հատ

Անտիոքոս Է. . . . . . . 8 »

Դեմետր Բ. . . . . . . 4 »

Ալեքսանդր Բալա . . . . . 1 »

Փյունիկյան քաղաքների անունով՝ Տյուրոս—22,
Սիդոն—1 և Արադ—1։

Իրանի Պարթևական թագավորների 8 դրամները վերաբերում են՝

Միհրդատ Բ-ին . . . . . 1 հատ

Հրահատ Դ-ին (Ֆրաատ) . . . 1 »

Որոդ Ա-ին . . . . . . 6 »։

Կապադովկիայի 3 դրամներից մեկը վերաբերում է Արիարաթ Դ-ին, իսկ 2-ը՝ Արիոբարզանին։

Հայկական 3 դրամներից երկուսը վերաբերում են Տիգրան Բ-ին, իսկ մեկը՝ Արտավազդ Բ-ին։

Փ. Ասիայի իշխանություններին՝ 4։ Պոնտական Միհրդատ Եվպատորի անունով՝ մեկ դրամ։

Հռոմեական ռեսպուբլիկական շրջանի դրամների մեջ կան երկու կամ մինչև էսկ երեք անուն կրողներ, օրինակ՝ Հուլիոս

Կեսար և Պուբլի Սեպտիմ Մակեր, Օկտավիանոս և Սալվիուս, Մարկոս Անտոնիոս և Բարբաթ, Լուցիոս Անտոնիոս և Մարկոս Անտոնիոս, Մարկոս Անտոնիոս և Կլեոպատրա, Մամիլի Լիմիտան, Լուցի Ցենզոր և Պուբլի Կրեպուսի։

Այսպիսով, ութ երկրների 178 դրամները կրում են 66 առանձին անուն, չհաշված կրկին կամ երեք անուն կրող դրամների ավելցուկ անունները։

Դրամների այս ժողովածուն կազմվել է, անշուշտ, առաջին դարի 30-ական թ.թ. հետո (մ.թ.ա.), քանի որ այս գանձի մեջ ժամանակով ամենավերջին դրամները, որոնք վերաբերում են Կլեոպատրային և Մ. Անտոնիոսին, կտրված են մինչև Կլեոպատրայի և Մ. Անտոնիոսի վախճանը, նշանակում է, թե՝ մեր թվականությունից առաջ առաջին դարի վերջին և կամ մեր թվականության առաջին դարի առաջին կեսին։ Մեր այդ կարծիքը հիմնված է այն փաստի վրա, որ մ.թ.ա. 40-ական և 30-ական թվականներին կտրված դրամները պահպանված են շատ լավ վիճակում և գործածության մեջ շատ քիչ են եղել։

Սակայն ինչ միջոցով է կազմվել այդպիսի բազմատեսակ դրամների ժողովածու։ Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ այդ գանձի մեջ գերակշիռ թիվ են կազմում հռոմեական ռեսպուբլիկայի շրջանի, սելևկյան թագավորների, Փյունիկիայի քաղաքների դրամները, ես կարծում եմ, որ սկզբնական շրջանում այդ տեսակ դրամներ ձեռք են բերվել իբրև պատերազմական տուգանք և կամ կողոպուտի ու ավարի միջոցով նոր գրավված երկրներում, գլխավորապես Ասորիքում, և փոխադրվել Հայաստան։ Այդպիսի պայմաններ Հայաստանում ստեղծվել էին Տիգրան Բ-ի օրով, երբ նա դեպի Կապադովկիա, Կիլիկիա, Ասորիք և Փյունիկիա կատարած արշավանքների ընթացքում կարող էր մեծ քանակությամբ տարբեր դրամներ ձեռք բերել և փոխադրել Հայաստան. որ, իրոք, Տիգրանի ժամանակ արքունի գանձարանը բավական հարուստ էր, դա երևում է նրանից, որ Լուկուլլոսը նոր կառուցված Տիգրանակերտում վերցրեց 8000 տաղանտ (մոտ 15 միլիոն ոսկի ռուբլի), իսկ Պոմպեոսը, իբրև պատերազմական տուգանք, Տիգրանից ստացավ, անշուշտ, Արտաշատի և Մեծ Հայքի բերդերի գանձարաններից 6000 տաղանտ (մոտ 12 միլիոն ոսկի ռուբլի)։ Այդպիսի մեծաքանակ դրամ, պարզ է, որ չէր կարող ամբողջովին Տիգրանի իր անունով կտրած դրամ լինել, այդ դրամների մեծ

մասը դրսից էր ձեռք բերված այն եղանակով, որ ես վերևը չնշեցի։ Ինչ վերաբերում է Սառնակունքի գանձի մեջ գտնված հռոմեական այն դրամներին, որոնք կտրված են մեր թվականությունից առաջ առաջին դարի 50-ական, 40-ական և 30-ական թվականներին, այսինքն Տիգրան Բ-ի թագավորության վերջին շրջանում և Արտավազդի իշխանության ժամանակ, դրանք կարող էին Հայաստան բերվել հայ ռազմիկների, կամ նրանց ուղեկցող վաճառականների միջոցով։ Հետաքրքիր է նաև իմանալ, թե ո՞ր քաղաքում և կամ երկրում կարող էր կազմված լինել Սառնակունքի գանձը. դա չէր կարող Ասորիքի Անտիոք քաղաքը լինել, քանի որ դեռ Տիգրան Բ-ի իշխանության վերջին շրջանից սկսած Ասորիքը դուրս էր հանված հայկական տերապետությունից, թեև առևտրական կապերը Հայաստանի և Ասորիքի միջև հավանաբար չէին ընդհատված, բայց դրամների այսպիսի ժողովածու դժվար թե կազմված լիներ Ասորիքում որևէ կոլեկցիոների, առևտրականի կամ զինվորականի ձեռքով և այդտեղից բերվեր Սյունիք։ Հավանականությունից զուրկ է նաև ենթադրել, որ Տիգրանակերտը կարող է այդ ժողովածուն կազմելու կենտրոնատեղին լինել։ Իմ կարծիքով, այդպիսի բազմատեսակ դրամների ժողովածու կարող էր կազմվել միմիայն Արտավազդի իշխանության ժամանակաշրջաններում՝ Արտաշատ մայրաքաղաքում։ Առաջին դարի առաջին կեսին Հռոմը և Իրանն ուժեղ կռիվ էին մղում միմյանց դեմ Հայաստանի տերապետության համար մեծ մասամբ հայկական հողի վրա. Կորբուլոնի լեգեոններն Արտաշատ մտան, երբ այդտեղից նոր էր հեռացել Տրդատը պարսիկ և հայ զորքերով. Կորբուլոնն Արտաշատից հեռանալուց առաջ քաղաքը կողոպտում և հրդեհի մատնեց։ Կարելի է ենթադրել, որ այդ պատերազմների միջոցին սյունեցի մի զորական կամ վաճառական այդ գանձը կողոպուտի կամ առևտրի միջոցով ձեռք է բերել և հայրենիք բերելով՝ այդ գանձը հողին է հանձնել ապահով մնալու համար։

Անհրաժեշտ եմ համարում ավելացնել նաև, որ Սառնակունքի գանձը մեծ արժեք է ներկայացնում հատկապես մեր Պատմական թանգարանի դրամագիտական բաժնի համար. բավական է ասել, որ հռոմեական կոնսուլների 48 անուն կամ 105 դրամներից 38 անուն կամ 74 դրամ մենք չենք ունեցել և առաջին անգամն է, որ այդքան թվով հին դրամներ ավելանում են մեր դրամագիտական ֆոնդի վրա. բացի դրանից, Հուլիոս Կե-

սարի, Օկտավիանոսի, Մարկոս Անտոնիոսի, Կլեոպատրայի և մի քանի այլ կոնսուլների դրամներ կան մեր դրամագիտական բաժնում, բայց դրանք մեծ մասամբ ստացված են նախկին Լազարյան ճեմարանից և Էջմիածնի թանգարանից, որոնց ծագումն անհայտ է. այդ շրջանի շատ քիչ դրամներ ունենք, որոնք գտնված են պատմական Հայաստանի հողի վրա։ Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության տեսակետից առանձնապես կարևոր է այն, որ այդ գանձի մեջ երկու դրամ վերաբերում են Հայաստանը նվաճելուն՝ Մարկոս Անտոնիոսի ձեռքով։ Հազվագյուտ են մեզ համար նաև Փյունիկիայի երկու քաղաքների (Սիդոն և Արադ) և Կապադովկիայի Արիոբարզան թագավորի անունով երկու դրամները։

Պետք է նկատել նաև, որ Սառնակունքի գանձն առհասարակ շատ լավ պահպանված է. ինչպես երևում է, կճուճի բերանը լավ ծածկված մնացել է հողի տակ երկար դարեր, և ջրի կաթիլներ ու հողի կտորներ չեն թափվել նրա մեջ, կճուճը թաղված է եղել չոր հողի մեջ, սկզբում գետնի երեսից բավական ցածր. ժամանակի ընթացքում հողի վերին շերտը հողմահարվել և կամ ջրի հոսանքի ենթակա լինելով՝ քշվել-տարվել է, այնպես որ գանձը հայտնաբերվելու միջոցին կճուճը գետնի երեսից հազիվ 10—15 սմ ցածր է գտնվել։

# ԴՐԱՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

## ՍԵԼԵՎԿՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԴՐԱՄՆԵՐ

### ԱՐԾԱԹ ԹԵԹՐԱԴՐԱԽՄԱ

**№ 15137.—ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԼԱ, 162—167 սել. թվ. (150—145 մ.թ.ա.)**[1]։ Դրամի ա. երեսին՝ Ալեքսանդր Բալա թագավորի գլուխն է պատկերացրած, դեմքը դեպի աջ թեքած (Սելևկյան թագավորների թեթրադրախմաների վրա թագավորների դեմքը դեպի աջ է ուղղված), կարճ և գանգուր մազերով ու վարսակալով, բ. երեսին՝ դրամի կենտրոնում Զևսի քանդակն է, բազմած գահի վրա,

[1] Սառնակունքի (Սայբալուի) գանձի 112 դրամները (№№ 15077—15113 և 15119—15193) ուսումնասիրելու գործում մեծ աջակցություն ցույց տվեց ինձ Ադրբեջանի ՍՍՌ Պատմության թանգարանի դրամագիտական բաժնի վարիչ պրոֆ. Եվ. Ալ. Պախոմովը, որին հայտնում եմ խորին շնորհակալություն։



Դրամների փակագրերը ըստ բնագրում նշված համարների

*դեմքը՝ դեպի ձախ, ծնկներին քղամիդ ձգած, որի մի ծայրը հասնում է մինչև ձախ ուսը, ձախ ձեռքին երկար գավազան. սրանից ներքև աջ կողմում առատության եղջյուրի խորհրդանշանը։ Զևսի աջ ձեռքը պարզած է դեպի առաջ և նրա թաթի վրա հաղթության աստվածուհու քանդակն է Զևսին պսակ մատուցանելու դիրքով։ Դրամի աջ կողմի դաշտում լեգենդ կետերով՝* ΒΑΣΙΛΕΩΣ ΑΛΕΞΑΝΔΡΟΥ, *ձախ կողմի դաշտում՝* ΘΕΟΠΑΤΟΡΟΣ ΕΥΕΡΓΕΤΟΥ, *ձախ կողմում, Զևսի ծնկների մոտ, փակագիր (1)*[1], *իսկ ոտների ներքևը, հորիզոնական գծի տակ՝* ΕΞΡ *(166 թ. սել.), որը դրամը կտրելու թիվն է ցույց տալիս և համապատասխանում է մոտավորապես 146 թ. մ.թ.ա., Զևսի ոտերի առջև՝* ΟΜ *դրամահատության տեղը կամ ամիսը ցույց տվող. քաշը՝ 16,60 գրամ, տրամագիծը՝ 29* մմ:

*№ 15077.—ԱՆՏԻՈՔՈՍ Է-ՐԴ ԷՎԵՐԳԵԹ, 174—183 սել. թվ. (138—129 թ. մ.թ.ա.). ա. երեսին՝ Անտիոքոս 7-րդի գլուխն է վարսակալով. բ. երեսին՝ Սելևկյան հարստության զինանշան արծիվը կանգնած նավի ցռուկի վրա, արմավենու ճյուղը ձգած աջ թևի վրայով դեպի վեր շրջանի եզրագծի ուղղությամբ. լեգենդ՝ դրամի աջ կողմում,* ΒΑΣΙΛΕΩΣ, *ձախ կողմում՝* ΑΝΤΙΟΧΟΥ, *արծվի ոտերի մոտ գավազան. արծվի կրծքի առաջ փակագիր (2), աջ կողմում փակագիր (3), սրանից ներքև սելևկյան տարեթիվը՝* ΒΠΡ *(182 թ.), որը համապատասխանում է 130 թ. մ.թ.ա. արծվի ոտերի միջև փակագիր (4)։ Քաշը՝ 13,90 գրամ, տրամ.՝ 27* մմ:

*№ 15124.— Նույն թագավորի անունով մի այլ տիպի դրամ. ա. երեսին՝ նույն թագավորի գլուխը վարսակալով. բ. երեսին, կենտրոնում, Պանթենոնի Աթենաս աստվածուհու քանդակն է՝ կանգնած դիրքով, կրկնազգեստով, գլխին սաղավարտ, կրծքին այծի մորթի, աջ ձեռքը դեպի աջ պարզած ու նրա վրա հաղթության աստվածուհին՝ ձախ ձեռքով բռնած է նիզակը, հենած վահանին։ Դրամի աջ կողմի դաշտում լեգենդ կետերով՝* ΒΑΣΙΛΕΩΣ ΑΝΤΙΟΧΟΥ, *ձախ կողմի դաշտում՝* ΕΥΕΡΓΕΤΟΥ. *ձախ կողմում՝ լեգենդի և դրամի եզրի միջև, փակագիր(5), իսկ Աթենասի ոտերի առջև այլ փակագիր (6). աջ կողմում նի-*

---

[1] *Դրամների վրա եղած փակագրերը և նշանագրերը տեխնիկական պատճառով գրված են առանձին տախտակի վրա համարներով և զետեղված է հոդվածի վերջում։*

դակի մոտ մի այլ փակագիր (7). պահպանված է լավ: Քաշը՝ 16 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 15125.—Նույն թագավորի անունով և նույն տիպի մի այլ դրամ, տարբերվում է նրանից միայն դրամի ձախ կողմում լեգենդի և շրջանի եզրի միջև եղած փակագրով (18). քաշը՝ 16,30 գրամ, տրամ.՝ 28 մմ:

№ 15126.—Նույն թագավորի անունով և նույն տիպի մի այլ դրամ, նույն պատկերներով ու լեգենդներով և նույն փակագրերով, № 15124-ի երկրորդ օրինակը. քաշը՝ 12,90 գրամ, տրամ.՝ 28 մմ:

№ 16102[1].—Նույն թագավորի անունով և նույն տիպի մի այլ դրամ, վերին եզրից քիչ ճեղքված, № 15124-ից տարբերվում է միայն բ. երեսի ձախ կողմի դաշտի լեգենդից ներքև դրված փակագրով (9): Քաշը՝ 16,30 գր., տրամ.՝ 28 մմ:

№ 16103.—Նույն թագավորի անունով, նույն տիպի մի այլ դրամ. ձախ կողմի դաշտում փակագիր (5): Քաշը՝ 16,20 գր., տրամագիծը՝ 28 մմ:

№ 16104.—Նույն թագավորի անունով մի այլ դրամ, եզրից քիչ ճեղքված. բ. երեսին, աջ կողմում, փակագիր (10), ձախ դաշտում փակագիր (9): Քաշը՝ 16,60 գր. տրամ.՝ 28 մմ:

№ 16105.—Նույն թագավորի անունով № 15077-ի տիպի մի այլ դրամ, որի մի քառորդը կտրված է, իսկ մնացածը կռանով ծեծած. ա. երեսին՝ Անտիոքոսի գլուխը, բ. երեսին՝ սելևկյան զինանշան արծիվը, որի ոտերի ներքևի մասն է մնացել, շրջանագծի ուղղությամբ լեգենդից մնացել է միայն ΑΝΤΙΟΧΟΥ: Քաշը՝ 12,10 գր., տրամ.՝ 22 մմ:

№ 15127.—ԴԵՄԵՏՐ Բ-ՐԴ ՆԻԿԱԴՈՐ, (167—172 թ.թ. և 182—187 սել. թվ. (145—140 թ.թ. և 130—125 թ.թ. մ.թ.ա.): Դրամի ա. երեսին՝ Դեմետր Բ-րդի գլուխն է վարսակալով, բ. երեսին, կենտրոնում, սելևկյան արծիվն է կանգնած նավի ցռուկի վրա, արմավենու ճյուղը ձգած աջ թևի կողմից դեպի վեր. շրջանի եզրի ուղղությամբ լեգենդ. աջ կողմում՝ ΒΑΣΙΛΕΩΣ, ձախ կողմում՝ ΔΗΜΗΤΡΙΟΥ, նույն կողմում գայիսոն, դրանից վերև փակագիր (2), աջ կողմում մի այլ փակագիր (11), ներ-

[1] Սառնակունքի դրամներից №№ 16022—16027 և 16089—16148 ուշ ստացվելու պատճառով՝ ուսումնասիրության ընթացքի մեջ են. այստեղ դրված են նրանցից մի քանի նմուշներ:

քեր թվականը՝ ΔΠΡ, 184 սել. թվ. (128 թ. մ.թ.ա.), արծվի ոտերի միջև մի այլ փակագիր (4). քաշը՝ 13,90 գրամ, տրամագիծը՝ 26 մմ:

№ 16097.—Նույն թագավորի անունով մի այլ դրամ, բ. երեսին, արծվի կրծքի առաջ, փակագիր (12), արծվի թևերի ետևը փակագիր (13), արծվի ոտերի միջև փակագիր (14). քաշը՝ 14 գրամ, տրամ.՝ 28 մմ:

№ 16098.—Դեմետր Ֆիլադելֆի անունով մի այլ տիպի դրամ. ա. երեսին՝ Դեմետր գլուխը. բ. երեսին՝ Զևսը բազմած գահի վրա, աջ ձեռքին սլաք, ձախ ձեռքին աղեղ, աջ կողմի դաշտում լեգենդ՝ [ΒΑΣΙΛΕΩΣ ΔΗΜΗΤΡΙΟΥ], ձախ կողմի դաշտում երեք տող միմյանց տակ լեգենդ՝ ΘΕΟΥ [Φ]ΙΛΑΔΕΛΦΟΥ [ΝΙ]ΚΑΤΟΡΟΣ. գահից ցած, գծի տակ, թվականը՝ ΗΞΡ 168 սել. (144 թ. մ.թ.ա.). քաշը՝ 16,70 գր., տրամ.՝ 28 մմ:

№ 15078.—ՓԻԼԻՊՊՈՍ ԷՊԻՖԱՆ ՖԻԼԱԴԵԼՖ 220—229 սել. թվ. (92—83 թ. մ.թ.ա.)։ Անթվական։ Ա. երեսին՝ Փիլիպպոս Էպիֆանի գլուխն է՝ վարսակալով. բ. երեսին՝ Զևսն է պատկերացրած՝ գահի վրա բազմած, ձախ ձեռքին երկար գավազան, աջ ձեռքին հաղթության աստվածուհին, վերջինիս պարզած ձեռքին պսակ՝ Զևսին մատուցանելու դիրքով։ Դրամի աջ կողմի դաշտում հաստ կետերով և գծերով լեգենդ՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΦΙΛΙΠ-ΠΟΥ, ձախ կողմի դաշտում՝ ΕΠΙΦΑΝΟΥ ΦΙΛΑΔΕΛΦΟΥ։ Զևսի ոտերի առաջ փակագիր (15), Զևսի ոտերի ներքև հորիզոնական գծի տակ մաշված տառերի հետքեր կան, իսկ գահի ստորոտում փակագիր (16)։ Քաշը՝ 14,40 գր., տրամ.՝ 27 մմ:

№ 15079.—Նույն թագավորի անունով և նույն տիպի մի այլ դրամ. այս դրամի վրա, համեմատած № 15078-ի հետ, բացակայում է միայն բ. երեսին Զևսի ոտերի առաջ եղած փակագիրը։ Պահպանված է շատ լավ վիճակում։ Քաշը՝ 15,20 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 15080.—Նույն տիպի մի այլ դրամ, № 15079-ի երկրորդ օրինակը. այս դրամի բ. երեսին՝ ներքևի հորիզոնական գծի տակ նշմարվում են տառերի հետքեր։ Քաշը՝ 14,60 գրամ, տրամագիծը՝ 26 մմ:

№ 15081.—Նույն տիպի մի այլ դրամ, տարբեր է միայն բ. երեսին Զևսի ոտերի առջևի փակագիրը (17), բացի դրանից ներքևի հորիզոնական գծի տակ պարզ նշմարվում են մի քանի

տառերի վերին ծայրերը. պահպանված է լավ վիճակում։ Քաշը՝ 14,80 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 15082.—Նույն տիպի մի այլ դրամ, բ. երեսին՝ լեգենդը գրված է ավելի բարակ գծերով և կետերով. դրամի ձախ կողմում Զևսի ոտերից քիչ բարձր՝ փակագիր (18). Զևսի ոտերի ստորին մասի առաջ փակագիր (12)։ Դրամի ներքևի հորիզոնական գծի տակ շանթերի միջև կետեր կամ զույգ տառեր. քաշը՝ 15,40 գր., տրամ.՝ 26 մմ:

№ 15128.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. երեսին՝ Զևսի ոտերի առաջ փակագիր (20), իսկ դրամի ներքևի հորիզոնական գծի տակ աջ ու ձախ ձգված շանթերի միջև փակագիր (21)։ Պահպանված է լավ։ Քաշը՝ 14,60 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 15129.—Նույն տիպի մի այլ դրամ, նման № 15079-ին, Զևսի ոտերի առաջ փակագիր (19), դրամի ներքևի հորիզոնական գծի տակ եղած փակագիրը մաշված է, լեգենդի վերջին տողի ձախ կողմի լեգենդի մի քանի տառերը կտրված։ Քաշը՝ 14,70 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 15130.—Նույն տիպի մի այլ դրամ, նման № 15079-ին, միայն Զևսի ոտերից ցած, հորիզոնական գծի տակ փակագիր (22) է. քաշը՝ 14,90 գր., տրամ.՝ 26 մմ:

№ 15131.—Նույն տիպի մի այլ դրամ, № 15082-ի երկրորդ օրինակը, քաշը՝ 13,20 գրամ, տրամ.՝ 28 մմ:

№ 15132.—Նույն տիպի մի այլ դրամ. տարբերվում է փակագրով, Զևսի ոտերի առաջ փակագիր (23). դրամի հորիզոնական գծի տակ անորոշ տառերի վերին ծայրերն են երևում։ Քաշը՝ 15,10 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 15133.—Նույն տիպի մի այլ դրամ. Զևսի ոտերի ստորին մասի առջև փակագիր (7), դրամի ներքևի հորիզոնական գծի տակ տառերը մաշված են։ Քաշը՝ 14,80 գր., տրամ.՝ 27 մմ:

№ 15134.—№ 15128-ի տիպի մի այլ դրամ. տարբերվում է միայն բ. երեսի ներքևի հորիզոնական գծի տակ շանթերի կենտրոնում եղած փակագրով (24). ձախ կողմի լեգենդի վերջին բառի մի քանի տառերը կտրված են։ Զևսի ոտերի առաջ փակագիր չկա։ Քաշը՝ 15,10 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 15135.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. երեսին՝ Զևսի և գահի ոտերի ներքևի մասերը կտրված են (շրջանակից դուրս)։ Քաշը՝ 15,10 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 15136.—Նույն տիպի մի այլ դրամ, № 15135-ի երկրորդ

*օրինակը. այս դրամի բ. երեսի ներքևի հորիզոնական գծի տակ շանթերի միջև պարզ երևում է փակագիրը (25)։ Քաշը՝* 14,70 *գրամ, տրամ.՝* 26 մմ:

№ 16099.—*Նույն Թագավորի անունով, նույն տիպի մի այլ դրամ,* № 15129-*ի երկրորդ օրինակը։ Քաշը՝* 15,10 *գր., տրամագիծը՝* 25 մմ:

№ 16100.—*Նույն Թագավորի անունով նույն տիպի մի այլ դրամ, բ. երեսին՝ Զևսի ոտքի տակ, ուղիղ գծի ներքևը, փակագիր* (26)*։ Քաշը՝* 14,80 *գրամ, տրամ.՝* 26 մմ:

№ 16101.—*Նույն Թագավորի անունով նույն տիպի մի այլ դրամ, փակագիրն անորոշ,* № 15081-*ի երկրորդ օրինակը։ Քաշը՝* 15 *գր., տրամ.՝* 27 մմ:

## ՓՅՈՒՆԻԿԻԱՅԻ ՏՅՈՒՐՈՍ (ՏԻՐ) ՔԱՂԱՔԻ ԱՆՈՒՆՈՎ ԴՐԱՄՆԵՐ

### ԱՆԱՆՈՒՆ. ԱՐԾԱԹՅԱ ԹԵՏՐԱԴՐԱԽՄԱ

*Սառնակունքի գանձի մեջ Տյուրոս (Տիր) քաղաքի անունով բավական դրամներ կան, հավանական է ենթադրել, որ Փյունիկիայի այդ վաճառաշահ քաղաքն անկախ և ինքնավար էր. միայն մեզ համար դեռևս պարզ չէ, թե այդ դրամների վրա նշանակված թվականները սելևկյան ժամանակաշրջանով են նշանակված, թե Տիր քաղաքն ունեցել է իր առանձին տոմարը։*

№ 15083.—*Տյուրոս (Տիր) քաղաքի անունով թեթրադրախմա. ա. երեսին՝ Հերկուլեսի գլուխն է դափնյա պսակով, պարանոցին առյուծի մորթի ձգած. բ. երեսին՝ դրամի կենտրոնում արծիվն է կանգնած նավի ցռուկի վրա, արմավենու ճյուղը ձգած արծվի աջ թևից դեպի վեր. արծվի ոտքերի մոտ և նրանց զուգահեռ գայիսոն. դրամի շրջանագծի ուղղությամբ լեգենդ՝* ΚΑΙ ΑΣΙΛΟΥ, *բոլոր տառերի վերին կես մասը կտրված,* ΤΥΡΟΥ ΙΕΡΑΣ. *դրամի ձախ կողմի դաշտում արծվի կրծքի մոտ թվականը՝* ΠΝ *(88 թ.)։ Աջ կողմի դաշտում, արմավենու ճյուղից ներքև՝ փակագիր (27), որ կարող է կամ ամսաթիվը ցույց տալ և կամ դրամահատության մագիստրատը։ Այս դրամների վրա արծվի երկու ոտքերի միջև գործ են ածված տառեր կամ նշանագրեր իբրև փակագիր (28)։ Քաշը՝* 14,30 *գրամ, տրամ.՝* 28 մմ:

№ 15084.—*Նույն քաղաքի անունով և նույն տիպի մի այլ*



ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

դրամ. բ. ե ր ե ս ի ն՝ շրջանագծի ուղղությամբ լեգենդի աջ կողմի մասը կտրված (շրջանակից դուրս է մնացել). ձախ կողմի դաշտում թվականը՝ ΠΖ (87 թ.), աջ կողմի դաշտում՝ փակագիր (29), արծվի երկու ոտերի միջև նշանագիր (30), ընթա ցառը։ Քաշը՝ 14,30 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 15145.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. ե ր ե ս ի ն՝ ձախ կողմի դաշտում, արծվի կրծքի առաջ թվականը՝ ΟΕ (75 թ.), աջ կողմի դաշտում փակագիր (16), արծվի երկու ոտերի միջև փակագիր (31)։ Քաշը՝ 14,20 գրամ, տրամ.՝ 28 մմ:

№ 15146.—Նույն տիպի մի այլ դրամ. տարբերվում է № 15145 դրամից միայն թվականով, որ այս դրամի վրա նշանակված է ΟΗ (78 թ.)։ Քաշը՝ 14,20 գրամ, տրամ.՝ 27 մմ:

№ 15147.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. ե ր ե ս ի ն՝ լեգենդի մի բառը կտրված, թվականը՝ ΠΔ (84 թ.). դրամի աջ կողմի դաշտում փակագիր (32), արծվի ոտերի միջև նշանագիր (30)։ Քաշը՝ 14,30 գրամ, տրամ.՝ 28 մմ:

№ 15148.—Նույն տիպի մի այլ դրամ. № 15147-ից տարբերվում է միայն թվականով, որ այս դրամի վրա նշանակված է ΠC (86 կամ 87 թ.)։ Քաշը՝ 14,30 գրամ, տրամ.՝ 28 մմ։

№ 15149.—Նույն տիպի մի այլ դրամ, № 15447-ի երկրորդ օրինակը։ Քաշը՝ 14,20 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 15150.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. ե ր ե ս ի ն՝ կտրըված է լեգենդի մի մասը, թվականը՝ Ο (70 թ.), արծվի ոտերի միջև փակագիր (33)։ Քաշը՝ 14,30 գրամ, տրամ.՝ 28 մմ:

№ 15151.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. ե ր ե ս ի ն՝ թվականն է՝ ΠΑ (81 թ.), աջ կողմի դաշտում մենագիր՝ BN. արծվի ոտերի միջև փակագիր (34)։ Քաշը՝ 14,20 գրամ, տրամ.՝ 28 մմ:

№ 15152.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. ե ր ե ս ի ն՝ լեգենդի մասը մաշված, դրամի ձախ դաշտում թվականը՝ ΠΕ (85 թ.), աջ կողմի դաշտում մենագիր՝ BN, արծվի ոտերի միջև փակագիր (30)։ Քաշը՝ 14,30 գրամ. տրամ.՝ 29 մմ:

№ 15153.—№ 15084-ի տիպի մի այլ դրամ, տարբեր է միայն աջ դաշտի փակագիրը (35)։ Քաշը՝ 14 գրամ, տրամագիծը՝ 27 մմ:

№ 15154.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. ե ր ե ս ի ն՝ լեգենդի մի մասը շրջանակից դուրս. թվականը՝ ΓΔ (33 թե՞ 31). աջ կողմի դաշտում փակագիր (36), արծվի ոտերի միջև նշանագիր (25)։ Քաշը՝ 14 գրամ, տրամ.՝ 29 մմ:

№ 15155.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. երեսին՝ աջ կողմում լեգենդի մի մասը մաշված. թվականն է II (80 թ.), աջ կողմի դաշտում փակագիր (37), իսկ արծվի ոտքերի միջև նշանագիր (30)։ Քաշը՝ 14,20 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 15156.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. երեսին՝ լեգենդը և գայիսոնի ներքևի մասը կտրված. թվականը՝ ΠΖ (87 թ.), աջ կողմի դաշտում փակագիր (37), արծվի երկու ոտքերի միջև գիրը մաշված։ Քաշը՝ 14,20 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 15157.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. երեսին՝ ձախ կողմի դաշտում թվականը՝ I?N (60 թ.), աջ կողմի դաշտում փակագիր (24), արծվի երկու ոտքերի միջև նշանագիր (30). պահպանված է շատ լավ։ Քաշը՝ 14 գր., տրամ.՝ 29 մմ:

№ 16023.—Նույն քաղաքի անունով և նույն տիպի մի այլ դրամ. բ. երեսին՝ արծվի կրծքի առաջ թվականը՝ ΠΔ (84), արծվի ետևը մենագիր՝ BN։ Քաշը՝ 14,30 գրամ, տրամ.՝ 26 մմ։

№ 16089.—Նույն քաղաքի անունով և նույն տիպի մի այլ դրամ. բ. երեսին՝ արծվի կրծքի առաջ թվականը՝ ΠΖ (87), թևերի ետևը մենագիր՝ BN, ոտքերի միջև ինչ-որ անորոշ տառ։ Քաշը՝ 14,20 գր., տրամ.՝ 28 մմ:

№ 16090.—Նույն քաղաքի անունով և նույն տիպի մի այլ դրամ, բ. երեսին՝ շրջանագծի ուղղությամբ լեգենդի տառերի վերին մասերը կտրված. արծվի կրծքի մոտ թվականը՝ ΠΘ (89), թևերի ետևը փակագիր (32), արծվի ոտքերի միջև նշանագիր (30). քաշը՝ 14,40 գրամ, տրամ.՝ 25 մմ:

№ 16091.—Նույն տիպի մի այլ դրամ. արծվի կրծքի առաջ թվականը՝ AO (71 թ.), թևերի ետևը փակագիր (38), ոտքերի միջև մենագիր (28)։ Քաշը՝ 14,10 գր., տրամ.՝ 29 մմ:

№ 16092.—Նույն տիպի մի այլ դրամ. ա. երեսին՝ ձախ կողմում անկանոն դաջի շնորհիվ դաշտ չկա, իսկ աջ կողմում դաշտն ավելի մեծ է. բ. երեսին՝ արծվի կրծքի առաջ թվականը՝ ΠΘ (89), թևերի ետևը փակագիր՝ (39), արծվի ոտքերի միջև տառը մաշված։ Քաշը՝ 14,10 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 16093.—Նույն տիպի մի այլ դրամ, № 16090-ի երկրորդ օրինակը։ Քաշը՝ 14,20 գր., տրամ.՝ 27 մմ:

№ 16094.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. երեսին՝ արծվի կրծքի առաջ թվականը՝ ΠA (81), թևերի ետևը փակագիր (27), արծվի ոտքերի միջև փակագիր (40)։ Քաշը 14,10 գր., տրամագիծը՝ 27 մմ:

№ 16095.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. երեսին՝ արծվի կրծքի առաջ թվականը՝ ΠΒ, թե ΠΕ (82 թե 85), թևերի ետևը մենագիր՝ BN, արծվի ոտքերի միջև փակագիր (31)։ Քաշը՝ 14,90 գր., տրամ.՝ 27 մմ։

№ 16096.—Նույն տիպի մի այլ դրամ. բ. երեսին՝ արծվի կրծքի առաջ թվականը՝ ΟΑ (71), թևերի ետևը փակագիր (16), արծվի ոտքերի միջև տառը մաշված։ Քաշը՝ 13,90 գր., տրամագիծը՝ 28 մմ։

## ՀՌՈՄԵԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ ԴՐԱՄՆԵՐ

### ԱՐԾԱԹ ԴԵՆԱՐ

№ 15091.—ՀՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ.—Ա. երեսին՝ երկրագործության և հացահատիկի աստվածուհի Ցերեսի գլուխն է՝ հասկերից հյուսած պսակով. դրամի աջ կողմում լեգենդ՝ DICT ITER, ձախ կողմում՝ COS TERT։ Դրամի բ. երեսին՝ կենտրոնում սրվակ, ձախ կողմում առատության եղջյուրի խորհրդանիշը և դգալ, աջ կողմում ջահ. դրամի վերին կողմում լեգենդ՝ ANGUR, ներքևում՝ PONT. MAX. աջ կողմում մենագիր՝ M. դրամը կտրված է 46 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,90 դրամ, տրամ.՝ 18 մմ։

№ 15102.—Նույն եռապետի անունով մի այլ տիպի դրամ. ա. երեսին՝ կետերով շրջանագծի մեջ պատկերացրած է փիղ, նրա ոտքերի տակ վիշապ, որի գլուխը բարձրացած է մինչև փղի կնճիթը. փղի ոտքերից ցած, հորիզոնական գծի տակ, լեգենդ՝ CAESAR։ Բ. երեսին՝ նույնպիսի շրջանագծի մեջ բարձրագույն քրմի իշխանության արտահայտող հատկանիշներ՝ կացին, գլխարկ և առատության եղջյուր. առանց որևէ լեգենդի և փակագրի. կտրված է 44 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,80 դրամ, տրամագիծը՝ 19 մմ։

№ 15186.—Նույն եռապետի անունով մի այլ տիպի դրամ. ա. երեսին՝ Վեներա աստվածուհու գլուխն է պատկերացրած՝ պսակով (դիադեմայով), առանց լեգենդի։ Բ. երեսին՝ Էնեասի պատկերն է, որն իր հորը ձախ ուսի վրա դրած տանում է դեպի Պալադիումը, իսկ դեպի աջ պարզած աջ ձեռքին հաղթանակի աստվածուհին (Վիկտորիան) է նիզակով. դրամի աջ կողմում լեգենդ՝ CAESAR։ Դրամը կտրված է 46 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,70 դրամ, տրամ.՝ 20 մմ։

№ 16134.— Հուլիոս Կեսարի անունով մի այլ դրամ, № 15186-ի երկրորդ օրինակը։ Քաշը՝ 3,80 գր., տրամ.՝ 18 մմ։

№ 16135.—Նույն եռապետի անունով նույն տիպի մի այլ դրամ, № 16134-ից տարբերվում է դրոշմով միայն։ Քաշը՝ 3,80 գր., տրամ.՝ 18 գիծ։

№ 16140.—Նույն եռապետի անունով № 15102-ի տիպի մի այլ դրամ։ Քաշը՝ 3,80 գր., տրամ.՝ 18 գիծ։

№ 15092.—Պ. ՍԵՊՈՒԼԻ ՄԱԿԵՐ.—ՀՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐԻ հիշատակին կտրած դրամ. դրամի ա. երեսին՝ Հուլիոս Կեսարի գլուխն է՝ պսակով. աջ կողմում լեգենդ՝ CAESAR, ձախ կողմում՝ DICT. PERPETVO. բ. երեսին՝ պատկերացրած է Վեներա աստվածուհին՝ ձեռքին հաղթանակի աստվածուհին, ձախ ձեռքին նիզակ, ոտքի մոտ վահան. դրամի աջ դաշտում լեգենդ՝ P. SEPVL[LIVS], ձախ կողմի դաշտում՝ MACER. կտրված է 42 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,90 գրամ, տրամ.՝ 17 մմ:

№ 16139.—Հուլիոս Կեսարի հիշատակին Սեպուլի Մակերի կողմից կտրած այլ տիպի դրամ. ա. երեսին՝ Հուլիոս Կեսարի գլուխը, աջ կողմի դաշտում լեգենդ՝ CAESAR, կտրված. ձախ կողմի դաշտում՝ IMPER. կտրված. բ. երեսին՝ Վեներան քառաձի կառքի վրա, պարզած աջ ձեռքին հաղթության աստվածուհին, ձախ ձեռքին գայիսոն, աջ դաշտում լեգենդ՝ P. SEPVLLIVS, ձախ դաշտում՝ MACER. կտրված։ Քաշը՝ 4,20 գր., տրամ.՝ 18 մմ:

№ 15185.—ՕԿՏԱՎԻԱՆՈՍ.—Ա. երեսին՝ դրամի կենտրոնում հռոմեական լեգեոնի արծվանիշ դրոշը. նրա աջ ու ձախ կողմերում լեգեոնի հաղթական զինանշանները, նրանց ներքևի մասում մենագիր՝ S. C. բ. երեսին՝ պատկերացրած է Մարսի գլուխը սաղավարտով. դրամի ձախ կողմի դաշտում լեգենդ՝ CAESAR, աջ կողմում՝ III VIR R. P. C. դրամը կտրված է 43 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,80 գր., տրամ.՝ 19 մմ:

№ 15106.—Նույն եռապետի անունով մի այլ դրամ. ա. երեսին՝ Օկտավիանոսի գլուխը, որի ետևը լեգենդ՝ C. CAESAR, առջևը՝ IMP. բ. երեսին պատկերացրած է արձան՝ Օկտավիանոսը ձիու վրա, աջ ձեռքը դեպի առաջ պարզած։ Քաշը՝ 4,0 գրամ, տրամ.՝ 18 մմ:

№ 15096.—ՕԿՏԱՎԻԱՆՈՍ ԵՎ ՍԱԼՎԻՈՒՍ.—Ա. երեսին պատկերացրած է Օկտավիանոսի գլուխը, որի ետևը լեգենդ՝ C. CAESAR, III. առջևը՝ VIR, R.P.C. բ. երեսին՝ դրամի կենտրոնում, դեպի աջ և դեպի ձախ շանթեր. լեգենդ շանթերից ներքև՝ Q. SALVIVS, շանթերից բարձր՝ COS. DESIG։ Քաշը՝ 3,70 գրամ, տրամ.՝ 19 մմ:

№ 15191.—ՏԻԲԵՐԻՈՍ ՍԵՄՊՐՈՆ.—Օկտավիանոսի հիշատակին կտրած դրամ. ա. երեսին պատկերացրած է Օկտավիանոսի գլուխը, որի ետևը լեգենդ՝ DIVI, դեմքի առջևը՝ IVLI. F. բ. երեսին՝ դրամի կենտրոնում, պատկերացրած է հռոմեական լեգեոնի արծիվը, նրա երկու կողմերում լեգեոնի հատկանիշները ցույց տվող նշաններ, աջ կողմում աստղ, դրամի շրջանագծի ուղղությամբ լեգենդ՝ TI. SEMPRON. IIII VIR. GRACCVS Q. DESIG. դրամը կտրված է 38—36 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 4,0 գրամ, տրամ.՝ 19 մմ:

№ 15179.—ՄԱՐԿՈՍ ԱՆՏՈՆԻՈՍ.—Ա. երեսին՝ քուրմի ձևով պատկերացրած է Մ. Անտոնիոսն ամբողջ հասակով, թիկունքից մինչև ոտերը շղարշ ձգած, ձեռքին առատության եղջյուրի խորհրդանիշը, դրամի շրջանագծի ուղղությամբ լեգենդ՝ M. ANTONIVS MF. MN. AVGVR IMP. TER. բ. երեսին՝ Մ. Անտոնիոսի գլուխը պսակով և արևի ճառագայթներով զարդարված. գլխի շուրջը լեգենդ՝ III VIR. R. P. C. COS. DESIG ITER ET TERT. դրամը կտրված է 36—31 թ.թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,80 գրամ, տրամ.՝ 18 մմ:

№ 15144.—Նույն եռապետի անունով մի այլ դրամ. ա. երեսին՝ Մ. Անտոնիոսի գլուխը, որի շուրջը լեգենդ՝ M. ANT. ANGVR III VIR R. P. C. բ. երեսին՝ հաղթանակի հատկանիշներ. ձախ կողմում լեգենդ՝ IMP. աջ կողմում՝ TER. դրամը կտրված է 38 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,80 գրամ, տրամ.՝ 19 մմ:

№ 15139.—Նույն եռապետի անունով թեթրադրախմա. ա. երեսին՝ տերևներով ու ծաղիկներով հյուսած շրջանակի մեջ Մ. Անտոնիոսի գլուխն է պատկերացրած, նրա շուրջը լեգենդ՝ M. ANTONIVS IMP. COS. DESIG ITER ET TERT. բ. երեսին՝ դրամի շրջանի կենտրոնում պատկերացրած է կողով, վրան Օկտավիանոսի գլուխը, ներքևից երկու վիշապներ գալարուն դեպի վեր են ցցված, մեկի բերանը Օկտավիանոսի դեմքի առջևն է, իսկ մյուսինը՝ նրա գլխի ետևը, ձախ կողմում լեգենդ՝ III VIR, աջ կողմում՝ R. P. C. դրամը կտրված է Փ. Ասիայում 39—34 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 11,60 գրամ, տրամ.՝ 26 մմ:

№ 16110.—Նույն տիպի մի այլ դրամ՝ № 15139-ի երկրորդ օրինակը. պահպանված է լավ: Քաշը՝ 12 գր., տրամ.՝ 27 մմ:

№ 16111.—Նույն տիպի մի այլ դրամ, № 15139-ի երրորդ օրինակը. պահպանված է շատ լավ: Քաշը՝ 12,20 գր., տրամ.՝ 27 գիծ:

№ 16112.—Նույն տիպի մի այլ դրամ, № 15139-ի չորրորդ օրինակը. պահպանված է լավ: Քաշը՝ 12,10 գր., տրամ.՝ 27 գիծ:

*№ 15088.—Մ. ԱՆՏՈՆԻՈՍ ԵՎ Լ. ԱՆՏՈՆԻՈՍ.—Ա. երեսին՝ Լուցիուն Անտոնիուսի գլուխը, որի ետևը լեգենդ՝* L. ANTONIVS, *դեմքի առաջ՝* COS. *բ. երեսին՝ Մարկոս Անտոնիուսի գլուխը. շուրջը լեգենդ՝* M: ANT. IMP. AVG III VIR [R. P. C. M.] NERVA PROQ. P. *դրամը կտրված է 41 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 4,0 գր., տրամ.՝ 19 մմ։*

*№ 15086.—Մ. ԱՆՏՈՆԻՈՍ ԵՎ ԿԼԵՈՊԱՏՐԱ.—Թետրադրախմա. ա. երեսին՝ Կլեոպատրայի գլուխը դիադեմայով, պարանոցին և կրծքին մարգարիտների շարան. շրջանագծի ուղղությամբ լեգենդ՝* ΒΑΣΙΛΙ ΒΑΣΙΛΙCCΑ ΚΛΕΩΠΑΤΡΑ [ΘΕ]Α ΝΕΩΤΕΡΑ. *բ. երեսին՝ Մ. Անտոնիուսի գլուխը, գլխի չորս կողմը շրջանագծի ուղղությամբ լեգենդ՝* ΑΝΤΩΝΙΟ C. ΑΥΤΟΚΡΑΤΩΡ ΤΡΙΤΟΝ ΤΡΙΩΝ ΑΝΔΡΩΝ. *պահպանված է շատ լավ։ Քաշը՝ 15,40 գրամ, տրամ.՝ 26 մմ։*

*№ 15085.—Նույն №15086 դրամի երկրորդ օրինակը։ Քաշը՝ 15,20 գրամ, տրամ.՝ 26 մմ։*

*№ 15140.—Նույն № 15086 դրամի երրորդ օրինակը։ Քաշը՝ 15,60 գրամ, տրամ.՝ 26 մմ։*

*№ 15141.—Նույն № 15086 դրամի չորրորդ օրինակը։ Քաշը՝ 14,50 գրամ, տրամ.՝ 26 մմ։*

*№ 15143.—Մ. Անտոնիուսի և Կլեոպատրայի անունով դենար. ա. երեսին՝ Կլեոպատրայի գլուխը պսակով, ականջներին գինդեր, պարանոցին մանյակ, պարանոցի տակ նավի դեկ. շրջանագծի ուղղությամբ լեգենդ՝* CLEOPATR[AE REGINAE] REGVM FILIORVM REGVM. *բ. երեսին՝ Մ. Անտոնիուսի գլուխը, շրջանագծի ուղղությամբ լեգենդ՝* ANTONI ARMENIA DEVICTA. *կտրված է 34 թ., պահպանված է շատ լավ։ Քաշը՝ 3,60 գր., տրամագիծը՝ 18 մմ։*

*№ 16116.—Նույն տիպի մի այլ դրամ, № 15143-ի երկրորդ օրինակը։ Քաշը՝ 3,80 գր., տրամ.՝ 18 մմ։*

*№ 15089.—ԿԱՅ ՎԻԲԻ ՊԱՆՍԱ.—Ա. երեսին՝ Պանսայի գլուխը. պարանոցից ներքև լեգենդ՝* PANSA. *բ. երեսին՝ Յուպիտերը գահի վրա բազմած, պարզած աջ ձեռքին պսակ, ձախ ձեռքին գայիսոն, դրամի ձախ կողմի դաշտում լեգենդ՝* [IOVIS. AXVR]. C. VIBIVS C.F.C.N. *դրամը կտրված է 43 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,80 գրամ, տրամ.՝ 17 մմ։*

*№ 15090.—Նույն տիպի մի այլ դրամ, տարբերվում է № 15089-ից դրոշմով միայն։ Քաշը՝ 3,80 գրամ, տրամ.՝ 19 մմ։*

№ 15176.—Նույն տիպի մի այլ դրամ, № 15089-ի երկրորդ օրինակը։ Քաշը՝ 3,60 գրամ, տրամ.՝ 17 մմ։

№ 15103.—Նույն Կ. Վ. Պանսայի անունով մի այլ դրամ, տարբեր տիպի. ա. երեսին՝ ազատության աստվածուհու գլուխը, պարանոցից ներքև լեգենդը կտրված. բ. երեսին՝ Ռոմա աստվածուհին բազմած՝ վահաններից պատրաստած բարձունքի վրա, աջ ձեռքին գավազան, լեգենդն աջ կողմից կտրված (շրջանակից դուրս), ձախ կողմում՝ C. PANSA C.F.C.N. դրամը կտրված է 43 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 4,0 գրամ, տրամ.՝ 18 մմ։

№ 16120.—Կ. ՎԻԲԻ ՊԱՆՍԱՅԻ անունով մի այլ դրամ, № 15089-ի երրորդ օրինակը։ Քաշը՝ 3,80 գր., տրամ.՝ 18 մմ։

№ 16121.—Նույն տիպի տարբեր դրոշմով մի այլ դրամ. բ. երեսին՝ ձախ կողմի լեգենդը կտրված։ Քաշը՝ 3,50 գրամ, տրամ.՝ 17 մմ։

№ 15158.—Կ. ԿԻՊԻՈՆ ԲՐՈՒՏ ԵՎ ՍԵՐՎԻԼԻ ԿԱՍԿԱ ԼՈՆԳՈՒՍ.— Ա. երեսին՝ Նեպտունի գլուխը, պարանոցի տակ եռաժանի. ձախ կողմում լեգենդ՝ CASCA, աջ կողմում՝ LONGVS. բ. երեսին՝ Վիկտորիա աստվածուհին, որը ձեռքով կտրտում է պսակը (դիադեման), իսկ ոտքի տակ տրորում սրբազան գավազանը, ձախ դաշտում լեգենդ՝ BRVTVS. աջ դաշտում՝ IMP. դրամը կտրված է 43—42 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,90 գրամ, տրամ.՝ 18 մմ։

№ 15167.— Կ. ԱԲՈՒՐԻ ԳԵՄԻՆ.— Ա. երեսին՝ Ռոմա աստվածուհու գլուխը, որա ետևը լեգենդ՝ GEM. բ. երեսին՝ Մարս աստվածը վահանով, նիզակով և հաղթանակի հատկանիշներով քառաձի կառքում. ներքևում, ձիերից ցած, լեգենդ՝ C. ABVRI, որանից ցած՝ ROMA. դրամը կտրված է 129 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,70 գրամ, տրամ.՝ 19 մմ։

№ 15178.—ՊՈՐՑԻԱ ԿԱՏՈՆ.—Ա. երեսին՝ ազատության աստվածուհու գլուխը, պարանոցի ետևը լեգենդ՝ ROMA, պարանոցի տակ՝ M. CA (վերջին տառերն անորոշ)։ Բ. երեսին՝ հաղթության աստվածուհի Վիկտորիան թևերով, գահի վրա բազմած, ձեռքին պսակ, ներքևը լեգենդ՝ VICTRIX. դրամը կտրված է 101 թ., մ.թ.ա.։ Քաշը՝ 4,0 գրամ, տրամ.՝ 19 մմ։

№ 15182.—ԿՆԵՑ ԿՈՐՆԻԼԻ ԲԼԱՋԻՈ.—Ա. երեսին՝ Սկիպիոն Աֆրիկացու գլուխը սաղավարտով. պարանոցի ետևը աստղաձև նշան, գլխի և դեմքի առաջ լեգենդ՝ [CN. BLA]SIO CNF. բ. երեսին՝ դրամի կենտրոնում, Յուպիտերը հենված գավա-

զանին, ձախ ձեռքին կայծակ. Նրա աջ կողմում Ցունոնը գայի-սոնով, կանգնած դիրքով, ձախ կողմում Պալլադան պսակով. Ներքևը գծի տակ լեգենդ՝ ROMA (տառերի վերին մասերն են երևում միայն)։ Դրամը կտրված է 99 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,70 գրամ, տրամ.՝ 19 մմ:

№ 15100.—Լ. ՏՈՐԻ ԲԱԼԲՈՒՍ.—Ա. երեսին՝ Լանուվյան Ցունոնի գլուխն այծի մորթով. գլխի ետևը մենագիր՝ I.S.M.R. բ. երեսին՝ պատկերացրած է ցատկող ցուլ. Նրա վերևը մենագիր՝ Q, ներքևը լեգենդ՝ L. THORIVS, ներքևը, գծի տակ՝ BALBVS. դրամը կտրված է 94 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,80 գրամ, տրամ.՝ 19 մմ: -

№ 15172. — Լ. ՊԻԶՈ ՖՐՈՒԳԻ. — Ա. երեսին՝ Ապոլլոնի գլուխը, պարանոցի առաջ մենագիր՝ H. բ. երեսին՝ պատկերացրած է վազող ձի, վրան մի հեծյալ գավինյա ճյուղն ուսին, ձիուց վերև մի ինչ որ մենագրի կտրված մաս. դրամի ներքևի մասում լեգենդ՝ [L. P]ISO FRVGI. դրամը կտրված է 89 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,80 գրամ.՝ 17 մմ:

№ 15109.—Նույն անունով մի այլ դրամ. ա. երեսին՝ նույն գլուխը, թեև մենագիրը չի երևում, բայց նշմարվում է նրա հետքը. բ. երեսին՝ պատկերացրած է նույնպիսի ձիավոր, միայն ձիուց վեր նշանակված է հռոմեական CXXIII (123) թիվը. լեգենդը նույնն է. լեգենդի ներքևում մենագիր (4). դրամը կտրված է 89 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,70 գրամ, տրամագիծը՝ 19 մմ:

№ 15170. — ՎԱԼԵՐԻՈՒՍ ԱՑԻՍԿՈՒԼՈՒՍ. — Ա. երեսին՝ Ապոլլոնի գլուխը պսակով, որա ետևը բրիչ, ձախ կողմում լեգենդ՝ ACISCVLVS. բ. երեսին՝ Վալերիուսը ցուլի վրա, ներքևը լեգենդ՝ L. VALERIVS. դրամը կտրված է 46—45 թ.թ. մ.թ.ա. և քաշը՝ 3,90 գրամ, տրամ.՝ 18 մմ:

№ 15184. — Կ. ՄԱՄԵԼԻ ԼԻՄԵՏԱ, ԼՈՒՑԻ ՑԵՆԶՈՐԻՆ ԵՎ ՊՈՒԲԼԻ ԿՐԵՊՈՒԶԻ.—Ա. երեսին՝ պատկերացրած է Վեներայի գլուխը պսակով և քողով. գլխի ետևը լեգենդ՝ L. CENSORIN. բ. երեսին՝ պատկերացրած է Վեներան երկձի կառքի վրա, վերևը հռոմեական VIII (8) թիվը. ձիաների ներքևը լեգենդ՝ C. LIME[TA]. որանից ցած, գծի տակ՝ P. CREPV[SI]. դրամը կտրված է 84 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 4,0 գրամ, տրամ.՝ 18 մմ:

№ 15099.—Լ. Կ[ՈՆԵՐԼԻ] ՑԻՆՆԱ.—Ա. երեսին՝ Վեներայի

գլուխը պսակով, առանց լեգենդի. բ. ե ր ե ս ի ն՝ առատության կրկնակի եղջյուրների խորհրդանիշը. Ներքևը մենագիր՝ Q. Դրամը կտրված է 82 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,90 գրամ, տրամագիծը՝ 18 մմ:

№ 15168. — Կ. ԱՆՆԻՈՒՍ ԼՈՒՍՔԻ ԻՐ ՀՈՐ ՏԱՐՔՎԻՏԻ ԱՆՈՒՆՈՎ ԿՏՐԱԾ ԴՐԱՄ. — Ա. ե ր ե ս ի ն՝ աստվածուհի Աննի Պերեննիի գլուխն է, պարանոցի ետևը կշեռք, գլխի շուրջը լեգենդ՝ [C. ANNIVS T.F.T.], մասամբ կտրված և մասամբ մաշված, ...RO. COS. EX. S. C. բ. ե ր ե ս ի ն՝ Վիկտորիա աստվածուհին երկձի կառքում, դափնյա ճյուղը ձեռքին, դրամի վերին կողմում հռոմեական XIII (13) թիվը, ձիաներից ներքև մենագիր՝ Q, ավելի ցած լեգենդի տառերի հետքեր, որոնց ծայրերն են երևում [C. TARQVITI P. F.]. դրամը կտրված է 82—81 թ.թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,70 գրամ, տրամ.՝ 18 մմ:

№ 15174.—ԼՈՒՑԻ ՊՐՈԿՈՒԼԻ.—Դրամի եզրերն ատամնաձև կտրտված են. ա. ե ր ե ս ի ն՝ Սոսպիտյան Յունոնի գլուխը ծածկված այծի մորթով. գլխի ետևը մենագիր՝ S. C. բ. ե ր ե ս ի ն՝ Յունոնան նիզակով և վահանով՝ երկձի կառքի վրա. ձիերից ներքև վիշապ, գծի տակ լեգենդ՝ [L. PROCVLI. R.], մասամբ կտրտված և մասամբ մաշված: Դրամը կտրված է 79 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,90 գրամ, տրամ.՝ 18 մմ:

№ 15164.—Ա[ԼԲԻՆԻ] ՊՈՍՏՈՒՄ.—Ա. ե ր ե ս ի ն՝ Հիսպանիի գլուխը քողով ծածկված. գլխի ետևը լեգենդ՝ HISPAN. բ. ե ր ե ս ի ն՝ դրամի կենտրոնում տղամարդու քանդակ, աջ ձեռքը վերև բարձրացրած, ձախ դաշտում հռոմեական լեգեոնի արծիվը կանգնած տապարի վրա, վերջինիս մի կողմում մենագիր՝ A. մյուս կողմում լեգենդ՝ ALBIN, դրամի ներքևում, հորիզոնական գծի տակ՝ [POST. A. F.], մասամբ մաշված և մասամբ կտրված. դրամի աջ կողմի դաշտում պատկերացրած է հռոմեական հյուպատոսների իշխանության տրցակը, վերջինիս մոտ մենագիր՝ N. S. դրամը կտրված է 74 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,90 գրամ, տրամ.՝ 18 մմ:

№ 16125.—Նույն տիպի մի այլ դրամ, № 15164-ի երկրորդ օրինակը: Քաշը՝ 3,80 գր., տրամ.՝ 19 մմ:

№ 15110. — Պ. ՊԼԱՎՏԻ ԻՊՍԱ (ՀԻՊՍԱ). — Ա. ե ր ե ս ի ն՝ Նեպտունի գլուխը, պարանոցի ետևը եռաժանի, դրամի աջ կողմի դաշտում, Նեպտունի դեմքի առջև, լեգենդ՝ P. YPSAE S. C. բ. ե ր ե ս ի ն՝ Յուպիտերը քառաձի կառքի մեջ, դրամի ներ-

քևում, հորիզոնական գծի տակ, լեգենդ՝ C. YPSAE COS. PRIV, աջ կողմում՝ CEPIT. դրամը կտրված է 58 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,90 գրամ, տրամ.՝ 18 մմ:

**№ 15105. — ԼՈՒՑԻ ԱՊՈՒԼԵՅ ՍԱՏՈՒՐՆ. —** Ա. երեսին՝ Հռոմա աստվածուհու գլուխը առանց լեգենդի և մենագրի, բ. երեսին՝ Սատուրն քառաձի կառքում. դրանից վեր՝ գուցե հռոմեական X [10] թիվը. ձիերի ոտերից ցած, հորիզոնական գծի տակ, լեգենդ՝ L. SATVRN. դրամը կտրված է 58 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,30 գրամ, տրամ.՝ 19 մմ:

**№ 15111. — Մ. ԷՄԻԼԻ ՍԿԱՎՐ ԵՎ Պ. ՊԼԱՎՏԻ ՀԻԲՍԱ. —** Ա. երեսին՝ դրամի կենտրոնում, ուղտ. նրա առաջի աջ կողմի ոտի մոտ Արետ թագավորը ծնկի վրա, մի ձեռքով բռնած ուղտի սանձը, մյուս ձեռքին դափնի ճյուղ, ուղտից վերը լեգենդ՝ M. SCAVR AED CVR, ձախ կողմում՝ [E]X, աջ կողմում՝ S. C. ներքևի հորիզոնական գծի տակ կտրված լեգենդ՝ [REX ARETAS]. բ. երեսին՝ Յուպիտերը քառաձի կառքում վերևից դեպի ներքև շանթեր է արձակում, դրանից վեր լեգենդ՝ [P.]HVPSAE AED. CVR. ձիերի ոտերի առաջ կարիճ, ներքևում, հորիզոնական գծի տակ, լեգենդ՝ C. HVPSAE. COS. PREIV[E]. աջ կողմում կտրված տառեր՝ [CAPTV]. դրամը կտրված է 58 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,80 գրամ, տրամ.՝ 17 մմ:

**№ 15175. — ԿՆԵՅ ՊԼԱՆՑԻՈՒՍ. —** Ա. երեսին՝ Դիանա աստվածուհու գլուխը. Դիանայի դեմքի առջև լեգենդ՝ [C]N. PLANCIVS. գլխի ետևը՝ AED. CVR. S. C. բ. երեսին՝ կրետական այծ, վերջինիս ետևը աղեղ և կապարճ, առանց լեգենդի. դրամը կտրված է 54 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,80 գր., տրամ.՝ 19 մմ:

**№ 15161. — ՊԱՈՒԼԼՈՒՍ ԷՄԻԼԻ ԼԵՊԻԴ. —** Ա. երեսին՝ Կոնկորդիայի [միության կամ համաձայնության աստվածուհու] գլուխը պսակով և քողով, գլխի շուրջը լեգենդ՝ PAVL[LVS LEP]IDVS CONCORDIA. բ. երեսին՝ Լուցի Էմիլի Պաուլլուսի (Լեպիդի հոր) պատկերը, [գլխի կողմից կտրված], աջ ձեռքով բռնած հաղթանակի հատկանիշները. դրամի ձախ կողմում Պերսեյը կապված ձեռքերով և նրա երկու որդիքը [Մակեդոնիայի գրավման հիշատակ]. դրամի ներքևի մասում հորիզոնական գծի տակ լեգենդ՝ [P]AVLLVS. դրամի վերին մասում ենթադրվում է [TERT] լեգենդը, որ այս դրամի վրա շրջանակից դուրս է: Դրամը կտրված է 54 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 4,0 գրամ, տրամ.՝ 18 մմ:

**№ 15159. — ՄԱՆՆԻ ԱՑԻԼԻ ԳԼԱԲՐԻՈՆ. —** Ա. երեսին՝

անորոշ աստվածուհու գլուխ պսակով, գլխի հետևը լեգենդ՝ SA-LVTIS. բ. երեսին՝ առողջության աստվածուհին ձախ ձեռքը հենված ցցին, իսկ աջ ձեռքին օձ, դրամի աջ կողմի դաշտում լեգենդ՝ MN. ACILIVS, իսկ ձախ կողմի դաշտում լեգենդը կորված [III VIR VALETV]: Դրամը կտրված է 54 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,70 գրամ, տրամ.՝ 19 մմ:

**№ 15104.**—Նույն **№ 15159** դրամի երկրորդ օրինակը. ա. երեսին՝ գլխի հետևը, լեգենդը կորված, իսկ բ. երեսին՝ ձախ կողմի լեգենդը՝ III VIR VALETV լրիվ է մնացել: Քաշը՝ 3,80 գրամ, տրամ.՝ 19 մմ:

**№ 15181.** — Կ. ԿՈՆՍԻԴԻ ՊԵՏ.—Ա. երեսին՝ Ապոլլոնի գլուխը. պարանոցի հետևի մենագիրը մաշված: Բ. երեսին՝ կուրուլյան աթոռներ, նրանց վրա պսակ, դրամի վերևի մասում լեգենդ՝ [C.] CONSI [DI]. ներքևում՝ PAETI. դրամը կտրված է 49 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,90 գրամ, տրամ.՝ 18 մմ:

**№ 15177.**—Տ. ԿԱՐԻՁԻ.—Ա. երեսին՝ Յունոնի գլուխը, նրա հետևը լեգենդ՝ MONETA. բ. երեսին՝ դրամ կտրելու գործիքները են պատկերացրած՝ մուրճ, աքցան և սալ. դրամի ներքևում լեգենդ՝ T. CARI[SIV]S. դրամը կտրված է 48 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,80 գրամ, տրամ.՝ 19 մմ:

**№ 15189.**—Նույն **№ 15177** դրամի երկրորդ օրինակը. դրամի աջ կողմի եզրից քիչ կտրված և լեգենդի մի մասի տառերը մաշված: Քաշը՝ 3,50 գրամ, տրամ.՝ 19 մմ:

**№ 15190.**—**№ 15177** դրամի երրորդ օրինակը. ա. երեսին՝ Յունոնի գլխի հետևի լեգենդը և բ. երեսի մուրճը կտրված [շրջանակից դուրս]: Քաշը՝ 3,20 գրամ, տրամ.՝ 19 մմ:

**№ 16127.**—Նույն տիպի մի այլ դրամ, 15177-ի չորրորդ օրինակը: Քաշը՝ 3,60 գրամ, տրամ.՝ 19 մմ:

**№ 15173.**—Տ. ԿԱՐԻՁԻԻ անունով մի այլ տիպի դրամ. ա. երեսին՝ Հռոմա աստվածուհու գլուխը. սրա հետևը լեգենդ՝ ROMA. բ. երեսին՝ պատկերացրած է գայիսոն, գունդ, առատության եղջյուրի խորհրդանիշը և ղեկ. դրամի ներքևի մասում լեգենդ՝ CARISI. դրամը կտրված է 48 թ. մ.թ.ա.: Քաշը՝ 3,60 գրամ, տրամ.՝ 18 մմ:

**№ 16130.**—Նույն անունով տարբեր տիպի մի այլ դրամ. բ. երեսին՝ քառաձի ռազմակառք, վրան հաղթության աստվածուհին, ձեռքին պսակ. գծի տակ լեգենդ՝ T. CARISI: Քաշը՝ 3,70 գրամ, տրամ.՝ 17 մմ:

*№ 15169.— Ք. ԿԱՍՍԻՈՒՍ (ԿԱՍԻԼՈՆԳԻ). — Ա. ե ր ե ս ի ն՝ բարեկեցության աստվածուհու գլուխն է պատկերացրած, սրա ետևը՝ սուր. բ. ե ր ե ս ի ն՝ արծիվը շանթերի վրա, նրա առջև սրվակ, ետևը գավազան, դրամի ներքևը հորիզոնական գծի տակ լեգենդ՝* Q. CASSIVS. *դրամը կտրված է 60 թ. մ.թ.ա., Քաշը՝ 3,90 գրամ, տրամ.՝ 18 մմ:*

*№ 15094.—ՀՈՍԻԴԻ ԳԵԹԱ.— Ա. ե ր ե ս ի ն՝ Դիանա աստվածուհու գլուխը պսակով. պարանոցի ետևը աղեղ և կապարճ, աջ կողմի դաշտում լեգենդ՝* GETA, *գլխի ետևը՝* III VIR. *բ. ե ր ե ս ի ն՝ վարազ, մեջքի մեջ խրված երկար նիզակ, բարակը հարձակվում է նրա վրա. դրամի ներքևը, հորիզոնական գծի տակ, լեգենդ՝* C. HOSIDI C. F. *դրամը կտրված է 54 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,70 գրամ, տրամ.՝ 18 մմ:*

*№ 15097.—Նույն տիպի մի այլ դրամ. № 15094-ի երկրորդ օրինակը։ Քաշը՝ 4,0 գրամ, տրամ.՝ 18 մմ:*

*№ 15187.— Նույն տիպի երրորդ օրինակը։ Քաշը՝ 3,60 գրամ, տրամ.՝ 19 մմ:*

*№ 15101.—Լ. ՊԼԱՎՏԻՈՒՍ ՊԼԱՆԿՈՒՍ.— Ա. ե ր ե ս ի ն՝ մասկա, ներքևը լեգենդ՝* L. PLAVTIVS. *բ. ե ր ե ս ի ն՝ Ավրորայի պատկերն է՝ մի ձեռքին ջահ, մյուս ձեռքին նետեր. դրամի ներքևը լեգենդ,* PLANCVS. *դրամը կտրված է 45 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,70 գրամ, տրամ.՝ 18 մմ:*

*№ 15192.—Նույն տիպի մի այլ դրամ, № 15101-ի երկրորդ օրինակը։ Քաշը՝ 3,80 գրամ, տրամ.՝ 18 մմ:*

*№ 15183.—ՄԱՐՑԻՈՒՍ ՊԼԵՏՈՐԻՈՒՍ.—Ա. ե ր ե ս ի ն՝ Ցիբելա կամ Կիբելա աստվածուհու գլուխը սաղավարտով. գլխի ետևը լեգենդ՝* CESTIANVS, *դեմքի առաջ՝* S. C. *բ. ե ր ե ս ի ն՝ թևատարած արծիվը կանգնած շանթերի վրա, դրամի ներքևում լեգենդ՝* M. PLAE, *աջ կողմի դաշտում շարունակությունը՝* TORIVS. M. F. *ձախ կողմի դաշտում՝* AED. CVR։ *Դրամը կտրված է 69 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 4,0 գրամ, տրամ.՝ 19 մմ:*

*№ 16123.—Նույն տիպի մի այլ դրամ, տարբերվում է № 15183-ից դրոշմով։ Քաշը՝ 4,0 գր., տրամ.՝ 18 մմ:*

*№ 15098.—Մ. Պլետորիուսի անունով այլ տիպի մի դրամ. ա. ե ր ե ս ի ն՝ աստվածուհու գլուխ, սրա ետևը մուրճ. բ. ե ր ե ս ի ն՝ դրամի կենտրոնում գավազան, սրա վերին ծայրում երկու գալարուն օձեր միմյանց դիմաց, դրամի աջ կողմի դաշտում լե-*

MARCELLVS, *ձախ կողմում՝* COS. QVINQ. *դրամը կտրված է 45 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,80 գրամ, տրամ.՝ 17* մմ:

***№ 15162.—ՀՈՍՏԻԼԻՈՒՍ ՍԱՍԵՌՆԱ.—Ա. ե ր ե ս ի ն՝*** *աստվածուհու գլուխ, սրա ետևը գալլիական արոր. բ. ե ր ե ս ի ն՝ Դիանա աստվածուհին, ձախ ձեռքին նիզակ, աջ ձեռքով բռնել է եղջերուի եղջյուրից. աջ կողմում լեգենդ՝* L. HOST[ILIVS], SASERNA. *դրամը կտրված է 46 թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,60 գրամ, տրամ.՝ 19* մմ:

***№ 15163.—Նույն տիպի մի այլ դրամ, № 15162-ի երկրորդ օրինակը. բ. ե ր ե ս ի ն՝ ձախ կողմի լեգենդը կտրված (շրջանակից դուրս)։ Քաշը՝ 3,90 գրամ, տրամ.՝ 19*** մմ:

***№ 16131.—Հոստիլիուսի մի այլ տիպի դրամ։ Քաշը՝ 4,0 գր., տրամ.՝ 18*** մմ:

***№ 16128.—Նույն տիպի մի այլ դրամ, № 15162-ի երկրորդ օրինակը։ Քաշը՝ 3,80 գր., տրամ.՝ 18*** մմ:

***№ 15095.—ԱԼԲԻՆՈՒՍ ՊՈՍՏՈՒՄԻՈՒՍ.—Ա. ե ր ե ս ի ն՝*** *Ալբինուսի գլուխն է, նրա ետևը լեգենդ՝* A. POSTVMIVS, *պարանոցի տակ՝* COS. *բ. ե ր ե ս ի ն՝ հասկերից հյուսած պսակի մեջ լեգենդ՝* ALBINV[S] BRVTI F. *դրամը կտրված է 44—43 թ.թ. մ.թ.ա.։ Քաշը՝ 3,80 գրամ, տրամ.՝ 16* մմ:

***№ 15166.—ԱՆԱՆՈՒՆ ԴԵՆԱՐ.—Ա. ե ր ե ս ի ն՝*** *Ռոմա աստվածուհու գլուխը. նրա ետևը † խաչաձև քանդակ (գուցե հռոմեական 10 թիվը). բ. ե ր ե ս ի ն՝ Դիասկուրյան երկու եղբայրները ձիերի վրա, երկար նիզակները ձեռներին արշավում են. ձիերի ոտերից ցած, հորիզոնական գծի տակ, լեգենդ՝* ROMA, *առանց թվականի։ Քաշը՝ 3,50 գրամ, տրամ.՝ 20* մմ:

***№ 15138.—Փ. ԱՍԻԱՅՈՒՄ ԿՏՐՎԱԾ ԱՆԱՆՈՒՆ ԹԵԹՐԱԴՐԱԽՄԱ.—Ա. ե ր ե ս ի ն՝*** *ծաղիկներով և տերևներով հյուսած շրջանակի մեջ կիսաբաց խորհրդավոր կողով, օձը բարձրացած կողովի ծայրին՝ հրապուրվում է նրանով։ Բ. ե ր ե ս ի ն՝ դրամի կենտրոնում բաղի գլուխ, կտուցը բաց, որանից ներքև մի ինչ որ քանդակ, գուցե փակագիր՝ (42), դրամի աջ ու ձախ դաշտի միջով երկու վիշապներ գալարուն միմյանց դեմ դեպի վեր են բարձրացրել իրենց գլուխները. դրամի վերին կողմում փակագիր (43). դրանց ներքևը մի այլ փակագիր (44). դրամի ձախ կողմի դաշտում փակագիր (45), նրանից վեր սլաք, դրամ աջ կողմի դաշտում քանդակ (46)։ Քաշը՝ 11,80 գրամ, տրամագիծը՝ 26* մմ:

№ 16027.—Նույն տիպի մի այլ դրամ, տարբերվում է № 15138-ից փակագրերով. բ. երեսի վերևի կողմում փակագիր (47), որանից ներքև մի այլ փակագիր (44), ձախ կողմի դաշտում փակագիր (450), աջ կողմի դաշտում նշանագիր (46)։ Քաշը՝ 12,20 գր., տրամ.՝ 29 մմ։

№ 16113.—Նույն տիպի մի այլ դրամ, տարբեր է բ. երեսի վերևում եղած փակագիրը (48). ձախ կողմի դաշտի փակագիրը (40) և աջ կողմի դաշտի փակագիրը (46)։ Քաշը՝ 11,70 գրամ, տրամ.՝ 26 մմ։

№ 16114.—Նույն տիպի մի այլ դրամ, վերին դաշտում լեգենդ՝ C. PVLCHE[R], որանից ներքև՝ PRO. COS. ներքև գծի տակ MHNOΔOPOS, ձախ դաշտում փակագիր (45)։ Քաշը՝ 12,20 գրամ, տրամ.՝ 27 մմ։

## ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄ

### ԱՐՏԱՇԻՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԾԱԹ ԴՐԱԽՄԱ ԵՎ ԹԵԹՐԱԴՐԱԽՄԱ

№ 15119.—ՏԻԳՐԱՆ Բ.—(95—55 թ. մ.թ.ա.) դրամի եզրերը երկու տեղից քիչ կտրված. ա. երեսին՝ ձախ կողմի դաշտը համեմատաբար մեծ է, քան աջ կողմինը. նույն երեսին շրջանագիծ կետերով [կես մասը շրջանակից դուրս է մնացել], մյուս երեսին՝ շրջանագծի կետերը մասամբ մաշված և մասամբ շրջանակից դուրս. նույն երեսի ներքևի մասը քիչ ներս ընկած։

Դրամի ա. երեսին պատկերացրած է Տիգրան Բ-ի գլուխը ծածկված թագով, որը վերջանում է ժանիքաձև (5 ժանիք). ժանիքներից ներքև մարգարտաշար գծի և թագի բացվածքի միջև քանդակված է ճառագայթաձև աստղ՝ ունենալով կենտրոնում մարգարտյա հատիկ. աստղի աջ և ձախ կողմերում մի մի արծիվ՝ գլուխները միմյանց դեմ։ Թագի ետևից ապարոշն է, ունի ականջակալներ և վզկալ։ Աջ կողմից վզկալի և ականջակալի թագի հետ միացման տեղից քիչ ներքև սրանկյուն եռանկյունի, որի միջից ցցուն կերպով երևում է Տիգրանի ծիրանի հագուստի ուսկապը և կրծքի վերին մասը։

Բ. երեսին, դրամի կենտրոնում, Անտիոքի պաշտպան Անտիոքիա աստվածուհին է, երկար զգեստով, բազմած բարձունքի վրա (երևի ժայռի վրա), դեմքը դեպի աջ, գլխին բրգաձև թագ, աջ ձեռքին արմավենու ճյուղ՝ պարզած դեպի առաջ։ Անտիոքիայի ոտերի տակ պատկերացրած է Օրոնտ գետը, որի մեջ

մի այլ դիցուհի մերկ մարմնով, որի վերին մասը ջրից դուրս, գլխին անկյուն կազմող ցցվածք, աջ ձեռքը խրած ջրի մեջ, իսկ ձախ ձեռքին դափնյա պսակ։ Դրամի աջ կողմի դաշտում լեգենդ՝ ΒΑΣΙΛΕΩΣ, ձախ կողմի դաշտում՝ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΟΥ. Անտիոքիայի դեմքի առաջ փսկագիր (50), իսկ Օրոնտ գետը ցույց տվող գծից ցած՝ ΞC, որը կարող է լինել դրամը կտրելու թվականը՝ 66 թ. մ.թ.ա.։ Դրամը պահպանված է լավ վիճակում, գործածության մեջ շատ քիչ է եղել։

Տիգրան Բ-ի այս դրամը իր նուրբ քանդակներով եզակի է մեր թանգարանի մեջ եղած նույն թագավորի անունով բավական թվով դրամների մեջ։ Քաշը՝ 4,0 դրամ, տրամ.՝ 19 մմ։

№ 16115. — Տիգրան Բ-ի թեթրադրախմա. ա. երեսին՝ Տիգրան Բ-ի գլուխը թագով, սովորական ապարոշով, վզկալով և ականջակալով. բ. երեսին՝ Անտիոքիա աստվածուհին բազմած, արմավենու ճյուղը աջ ձեռքին, ներքևը Օրոնտ գետը, մեջը մի այլ աստվածուհի լողալու դիրքով՝ ձախ ձեռքին դափնյա պսակ. աջ կողմի դաշտում լեգենդ՝ ΒΑΣΙΛΕΩΣ, ձախ կողմի դաշտում՝ ΤΙΓΡΑΝΟΥ. դրամի թվականն անորոշ է։ Քաշը՝ 15,50 գր., տրամ.՝ 26 մմ։

№ 16022.—Արտավազդ Բ-ի (55—33 մ.թ.ա.) արծաթե դրախմա. դրամի երկու երեսը եզրերի մոտ քիչ հղկված. դրամի ա. երեսին, կենտրոնում, Արտավազդ Բ-ի գլուխը ծածկված թագով, որը վերջանում է ժանիքաձև, դրանից ներքև քառանկյունի տարածության մեջ ճառագայթաձև աստղ, նրա աջ և ձախ կողմերում մի մի արծիվ գլուխները դեպի ետ միմյանց դարձրած. թագի ետևից ապարոշ, վզկալ, ականջներին երկուական հակինթ միմյանցից կախված, պարանոցին երեք շարք մարգարիտներ։ Բ. երեսին՝ երկանիվ քառաձի ռազմակառք, վրան հաղթության աստվածուհին, դեմքը դեպի ձախ. վերևի դաշտում լեգենդ՝ ΒΑΣΙΛΕΩ[Σ], ներքևի դաշտում՝ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑ-VΑΣ[ΔΟΥ]. ձիերի առաջ փակագիր (51). դրամը կտրելու թվականն անորոշ է։ Քաշը՝ 4,10 գր., տրամ.՝ 19 մմ։

## ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԴՐԱԽՄԱ

№ 16108.—ՄԻՀՐԴԱՏ Բ. Մեծի (92 թ.) անունով դրախմա. ա. երեսին՝ Միհրդատ Մեծի գլուխը երկար մորուքով, պարանոցին և օձիքի վրա մարգարիտների շարաններ. բ. երեսին՝ կենտրոնում, Անուրամազդան նստած դիրքով, ձեռքին աղեղ,

դեմքը դեպի աջ, չորս կողմում լեգենդ՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΣΑΚΟΥ ΜΕΓΑΛΟΥ ΕΠΙΦΑΝΟΥ։ Քաշը՝ 4,10 գր., տրամ.՝ 20 մմ:

№ 15120.—ՖՐԱԱՏ Գ. (ՀՐԱՀԱՏ 70—57 թ. մ.թ.ա.)—Ա. երեսին՝ Ֆրաատ Գ.-ի գլուխն է, դեմքը դեպի ձախ, երկար միրուքով, գլխին թագ՝ երեք շարք մարգարիտներով. Բ. երեսին՝ Անուրամագդան է բազմած գահի վրա, դեմքը դեպի աջ, դեպի առաջ պարզած աջ ձեռքին աղեղ. Անուրամագդայի ետևն առատության եղջյուրի խորհրդանիշը. դրամի վերևում լեգենդ՝ ΒΑΣΙΛΕΩΣ, աջ կողմում՝ ΜΕΓΑΛΟΥ (մասամբ մաշված), ներքեւում ΑΡΣΑΚΟΥ, ձախ կողմում՝ ΘΕΟΠΑΤΡΟΥ ΝΙΚΑΤΟΡΟΣ. գահի և Անուրամագդայի ոտքերի միջև փակագիր (52)։ Քաշը՝ 3,70 գրամ, տրամ.՝ 19 մմ:

№ 15112.—ՕՐՈԴ Ա. (ՈՐՈԴ 57—37 թ. մ.թ.ա.)—Ա. երեսին՝ Օրոդի գլուխն է, դեմքը դեպի ձախ, կարճ միրուքով, գլխին պսակ, մազերը հինգ շարք միմյանց վրա դարսած, գլխի ետևը կիսալուսին, դեմքի առաջ աստղ (կտրված), պարանոցին մարգարիտների շարաններ։ Բ. երեսին՝ Անուրամագդան է բազմած գահի վրա, դեմքը դեպի աջ, ձեռքին աղեղ։ Դրամի վերևում լեգենդ՝ ΒΑΣΙΛΕΟΣ (մաշված) ΒΑΣΙΛΕΩΝ, աջ կողմում՝ ΑΡΣΑΚΟΥ, ներքեւում՝ ΕΥΕΡΓΕΤΟΥ ΔΙΚΑΟΝ, ձախ կողմում՝ ΕΠΙΦΑΝΟΥ ΦΙΛΕΛΛΗΝΟΣ. աջ կողմում աղեղի ներքեւ փակագիր (53)։ Քաշը՝ 3,40 գրամ, տրամ.՝ 20 մմ:

№ 15113.—Նույն թագավորի անունով նույն տիպի մի այլ դրամ. աղեղից ներքև փակագիր (54)։ Քաշը՝ 3,80 գրամ, տրամագիծը՝ 20 մմ:

№ 15121.—Նույն թագավորի անունով նույն տիպի մի այլ դրամ, աղեղից ներքև փակագիր (55) (կիսամաշ)։ Քաշը՝ 3,50 գրամ, տրամ.՝ 19 մմ:

№ 15122.—Նույն թագավորի անունով նույն տիպի մի այլ դրամ. քաշը՝ 3,30 գրամ, տրամ.՝ 20 մմ:

№ 15123.—Նույն թագավորի անունով նույն տիպի մի այլ դրամ. առաջին երեսին, ձախ դաշտի կողմում, աստղը մաշված. մյուս երեսին, աղեղից ներքև, փակագիր (56)։ Քաշը՝ 3,60, տրամ.՝ 20 մմ:

№ 15109.—Նույն թագավորի անունով նույն տիպի մի այլ դրամ, առաջին երեսին Որոդի գլխի ետևը կիսալուսին։ Քաշը՝ 3,70 գր., տրամ.՝ 20 մմ:

## ՊՈՆՏԱԿԱՆ ԴՐԱՄ

№ 16106.—*ՄԻՀՐԴԱՏ Զ. ԵՎՊԱՏՈՐԻ անունով թեթրադրախմա. ա. երեսին՝ Միհրդատի գլուխը, բ. երեսին՝ ծաղիկներով և տերևներով հյուսված շրջանակի մեջ կենտրոնում եղջերու, դեմքը դեպի ձախ թեքված, արածելու դիրքով. ճյուղավորված եղջյուրներով. դրանից վերև լեգենդ՝* ΒΑΣΙΛΕΩΣ, *ներքևի դաշտում լեգենդ՝* ΜΙΘΡΑΔΑΤΟΥ. *որա ներքևը՝* ΕVΠΑΤΟΡΟΣ. *ձախ կողմում եղջերուի առաջ կիսալուսին՝ աստղով. դրամի աջ կողմում փակագիր (57), որանից ցած թվականը* ΖΚΣ *(226 սելևկյան թվականին, որը համապատասխանում է 86 թ. մ. թ. ա.). ներքևի դաշտում մենագիր՝* Α: *Քաշը՝ 16,70 գրամ, տրամ.՝* 30 մմ:

## ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ ԴՐԱՄՆԵՐ

№ 15108.—*ԱՐԻԱՐԱԹ Դ. ԹԱԳԱՎՈՐ (220—163 թ. մ. թ. ա.)։ Ա. երեսին՝ Արիարաթի գլուխն է պատկերացրած, որա ետևը մաշված տառերի հետքեր։ Բ. երեսին՝ Աթենաս աստվածուհին, ձախ ձեռքը հենած նիզակին, որի ներքևը գետնի վրա վահան, աջ ձեռքին հաղթության աստվածուհին, ձախ կողմում՝ Աթենասի ոտերի մոտ փակագիր (58), աջ կողմում մենագիր՝ (6). դրամի աջ կողմում լեգենդ՝* ΒΑΣΙΛΕΩΣ, *ձախ կողմում՝* [Α]ΡΙΑΡΑΘΟΥ, *դրամի ներքևում՝* ΕVΣΕΒΟΥΣ. *Քաշը՝ 3,60 գրամ, տրամ.՝* 16 մմ:

№ 15171.—*ԱՐԻՈԲԱՐԶԱՆ.— Ա. երեսին՝ Արիոբարզանի գլուխն է ժապավենով. բ. երեսին՝ Աթենաս աստվածուհին կանգնած դիրքով, ձախ ձեռքին նիզակ, հենած վահանին, աջ ձեռքին հաղթության աստվածուհին։ Դրամի աջ կողմի դաշտում լեգենդ՝* ΒΑΣΙΛΕVΣ, *ձախ կողմում՝* ΑΡΙΟΒΑΡΖ[ΑΝΟΥ] *շարունակությունը մաշված. դրամի ներքևի մասում լեգենդի մի քանի տառերի վերին ծայրերն են երևում։*

*Աթենասի ոտների առաջ փակագիր (59)։ Քաշը՝ 3,80 գրամ, տրամ.՝* 17 մմ:

№ 15193.—*Նույն անունով, բայց այլ տիպի և այլ դրոշմով մի այլ դրամ. Աթենասի ոտների առաջ փակագիր (60)։ Քաշը՝ 3,50 գր., տրամ.՝* 17 մմ: